Group of States against Corruption
Groupe d'États contre la corruption

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

2021 թվականի սեպտեմբերի 22

Հրապարակ

GrecoRC4(202

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների եւ դատախազների շրջանում

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆ

Ընդունվել է ԳՐԵԿՈ-ի կողմից իր 88-րդ լիագումար նիստում
(Ստրասբուրգ, 2021 թվականի սեպտեմբերի 20-22)

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ

ԳՐԵԿՈ քարտուղարություն
Եվրոպայի խորհուրդ
F-67075 Ստրասբուրգ Սեդեքս
+33 3 88 41 20 00

www.coe.int/greco

Գլխավոր տնօրինություն I
Մարդու իրավունքներ եւ օրենքի գերակայություն
Տեղեկատվական հասարակության եւ հանցագործությունների դեմ պայքարի հարցերով տնօրինություն

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Պարտավորությունների կատարման վերաբերյալ սույն միջանկյալ զեկույցով գնահատվում են Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցները՝ ուղղված Հայաստանի մասին չորրորդ փուլի գնահատման զեկույցում ներկայացված հանձնարարականների կատարմանը (տե՛ս 2-րդ պարբերությունը): ԳՐԵԿՈ-ի կողմից չորրորդ փուլի գնահատումը վերաբերում է «Պատգամավորների, դատավորների եւ դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելմանը»:

2. Չորրորդ փուլի գնահատման զեկույցը Հայաստանի վերաբերյալ ընդունվել է ԳՐԵԿՈ-ի 69-րդ լիագումար նիստի ժամանակ (2015 թվականի հոկտեմբերի 16-ին) եւ հրապարակվել 2016 թվականի փետրվարի 25-ին՝ Հայաստանի կողմից թույլտվություն ստանալուց հետո:

3. Չորրորդ փուլի Պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցն ընդունվել է ԳՐԵԿՈ-ի կողմից իր 78-րդ լիագումար նիստի ժամանակ (2017 թվականի դեկտեմբերի 8-ին) եւ հրապարակվել 2017 թվականի դեկտեմբերի 21-ին՝ Հայաստանի կողմից թույլտվություն ստանալուց հետո:

4. Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցն ընդունվել է ԳՐԵԿՈ-ի կողմից իր 84-րդ լիագումար նիստի ժամանակ (2019 թվականի դեկտեմբերի 6-ին) եւ հրապարակվել 2019 թվականի դեկտեմբերի 12-ին՝ Հայաստանի կողմից թույլտվություն ստանալուց հետո: Այդ զեկույցի մեջ ԳՐԵԿՈ-ն եկել է այն եզրակացության, որ պարտավորությունների կատարման ցածր մակարդակը Կանոնակարգի խմբագրված 31-րդ հոդվածի 8.3 կետի իմաստով «ընդհանուր առմամբ անբավարար է»: Հետեւաբար ԳՐԵԿՈ-ն որոշել է կիրառել 32-րդ հոդվածը, որը վերաբերում է փոխադարձ գնահատման զեկույցում ներառված հանձնարարականների կատարումը չապահոված անդամներին, եւ խնդրել է Հայաստանի պատվիրակության ղեկավարին ընթացիկ (այն է՝ i-iv, vii-ix, xi, xv, xvi եւ xviii) հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ ներկայացնել հաշվետվություն՝ այդ հոդվածի 2-րդ մասի i կետի համաձայն:

5. Չկատարված հանձնարարականների կատարմանն ուղղված հետագա միջոցներ ձեռնարկելու համար 2021 թվականի մարտի 31-ին Հայաստանի իշխանությունները ներկայացրել են Իրավիճակի մասին զեկույց: Այս տեղեկատվությունը հիմք է ծառայել Պարտավորությունների կատարման վերաբերյալ այս միջանկյալ զեկույցի համար:

6. Պարտավորությունների կատարման առնչությամբ համազեկուցողներ նշանակելու համար ԳՐԵԿՈ-ի կողմից ընտրվել են Վրաստանը եւ Հունգարիան: Վրաստանի կողմից համազեկուցող է նշանակվել տկն Գուլիսա ԿԱԽՆԻԱՇՎԻԼԻՆ, իսկ Հունգարիայի կողմից՝ պրն Բալինտ ՎԱՌՈՆ: Պարտավորությունների կատարման վերաբերյալ սույն միջանկյալ զեկույցը կազմելու աշխատանքներում նրանց աջակցում էր ԳՐԵԿՈ-ի քարտուղարությունը:

II. <u>ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ</u>

7. ԳՐԵԿՈ-ն Չորրորդ փուլի գնահատման իր զեկույցում Հայաստանին ներկայացրել է 18 հանձնարարական: Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցում ԳՐԵԿՈ-ն եկել է այն եզրակացության, որ յոթ (v, vi, x, xii, xiii, xiv եւ xvii) հանձնարարականներին բավարար չափով անդրադարձ է կատարվել, իսկ տասնմեկ հանձնարարականներ (i-iv, vii-ix, xi, xv, xvi եւ xviii) մասամբ են կատարվել: Ընթացիկ հանձնարարականների կատարման հարցը քննարկվում է ստորեւ:

Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների շրջանում

Հանձնարարական i.

8. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է Ազգային ժողովում ապահովել եւ էլ ավելի բարձրացնել օրենսդրական գործընթացների թափանցիկությունը՝ i) ապահովելով, որ օրենքների նախագծերի շուրջ հանրային քննարկումների պահանջը գործնականում կատարվի, եւ որ նախագծերն Ազգային ժողով ներկայացվեն, ինչպես նաեւ փոփոխությունները հրապարակվեն ժամանակին, եւ ii) ձեռնարկելով համապատասխան միջոցներ՝ ապահովելու համար, որ հանձնաժողովի նիստերի բովանդակությունը եւ դրա մասնակիցների վերաբերյալ տեղեկությունները հրապարակվեն, ինչպես նաեւ հանձնաժողովներն առավել ակտիվորեն կիրառեն խորհրդարանական լսումներ կազմակերպելու հնարավորությունը:*

9. Այս հանձնարարականը մասամբ է կատարված եղել Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցն ընդունելու դրությամբ: Հանձնարարականի i մասի առնչությամբ ԳՐԵԿՈ-ն ի գիտություն է ընդունել հանրային խորհրդակցության նոր ընթացակարգերը, որոնցով երկարացվում է առցանց խորհրդակցությունների նվազագույն վերջնաժամկետը, եւ Արդարադատության նախարարությանը վերապահվում է հանրային խորհրդակցություններ անցկացնելու գործելակերպի նկատմամբ վերահսկողության գործառույթ: Խորհրդարանում օրենսդրական նախագծերի հանրային քննարկումը, սակայն, շարունակում է մնալ անհետեւողական, հաճախակի են օգտագործվում «արագացված ընթացակարգեր»[1], եւ վաղ փուլում հանրությանը ներկայացված օրենսդրական նախագծերի վերաբերյալ փաստեր չկան: Ինչ վերաբերում է հանձնարարականի ii մասին, ԳՐԵԿՈ-ն բավարար է գնահատել հանձնաժողովների նիստերը եւ լսումներն առավել թափանցիկ, իսկ խորհրդարանական լսումներն առավել ընդգրկուն կազմով անցկացնելու փաստը: Հետեւաբար այն եզրակացրել է, որ հանձնարարականի այս մասը բավարար չափով կատարվել է:

[1] Իրավական ակտերի նախագծերի 15%-ն այսպես է ընդունվել:

10. Հանձնարարականի ընթացիկ i մասի առնչությամբ իշխանություններն այժմ վերահաստատում են, որ խորհրդարանում քննարկված օրենքների նախագծերը եւ դրանց առնչվող փոփոխությունները, որպես կանոն, հրապարակվում են «www.e-draft.am» առցանց հարթակում եւ Ազգային ժողովի կայքում: Առցանց հարթակը թույլ է տալիս ցանկացած շահագրգիռ կողմի առցանց ներկայացնել մեկնաբանություններ օրենսդրական նախագծերի վերաբերյալ: Ընդունված կարգի համաձայն՝ ԱԺ հանձնաժողովների եւ լիագումար բոլոր նստաշրջանները նույնպես շարունակվում են առցանց հեռարձակվել: Խորհրդարանի արդիականացված կայքը գործարկվելու է առաջիկա ամիսներին, իսկ «www.e-draft.am» հարթակի արդիականացված տարբերակը կօգնի էլ ավելի բարելավել իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հանրային խորհրդակցությունների որակը:

11. ԳՐԵԿՈ-ն գոհացուցիչ է համարում այն փաստը, որ խորհրդարանում քննարկված բոլոր իրավական ակտերի նախագծերը ժամանակին հրապարակվում են մասնագիտացված հարթակում եւ (կամ) Ազգային ժողովի կայքում: Այնուամենայնիվ, բացի այն պնդումից, որ առցանց գործիքներն արդիականացվում են հանրային խորհրդակցությունների համար դրանք ավելի հարմար դարձնելու նպատակով, օրինաստեղծ գործընթացում հանրային ներգրավվածության փաստացի գործելակերպի վերաբերյալ կոնկրետ տեղեկատվություն չի ներկայացվում: ԳՐԵԿՈ-ն այնուհետեւ նշում է, որ «արագացված ընթացակարգերը» դեռեւս շատ են օգտագործվում: Նկատի ունենալով այս թերությունները՝ հանձնարարականի ընթացիկ i մասը մնում է մասամբ կատարված:

12. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ i հանձնարարականը մնում է մասամբ կատարված:

Հանձնարարական ii.

13. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է՝ i) ընդունել պատգամավորների վարքագծի կանոնագիրք եւ այն հեշտ հասանելի դարձնել հանրության համար, որով հստակ ուղղորդում կապահովվի շահերի բախման եւ հարակից ոլորտներին, մասնավորապես՝ նվերների եւ այլ առավելությունների ընդունմանը, անհամատեղելիության դեպքերին, լրացուցիչ գործունեությանը եւ ֆինանսական շահերին, տեղեկատվության եւ պետական ռեսուրսների ոչ իրավաչափ օգտագործմանը եւ երրորդ կողմերի, օրինակ՝ լոբբիստների հետ շփումներին առնչվող հարցերում, ii) այն լրացնել դրա իրականացման համար անհրաժեշտ գործնական միջոցներով, օրինակ՝ մասնագիտական վերապատրաստում, խորհրդատվություն եւ իրազեկվածության մակարդակի բարձրացում:*

14. Այս հանձնարարականը մասամբ է կատարված եղել Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցն ընդունելու դրությամբ: Ինչ վերաբերում է հանձնարարականի i մասին, ԳՐԵԿՈ-ն վերահաստատել է, որ շահերի բախման եւ բարեվարքության հարցերի վերաբերյալ համապատասխան ուղղորդում պարունակող՝ պատգամավորների վարքագծի կանոնագիրք դեռեւս չկա: Հանձնարարականի ii մասի առնչությամբ դեռեւս պետք է իրականացվեն պարբերական եւ մասնագիտական վերապատրաստում եւ խորհրդատվություն կանոնագրքի վերաբերյալ:

15. Հանձնարարականի i մասի առնչությամբ այժմ իշխանությունները տեղեկացնում են, որ 2020 թվականի փետրվարին Ազգային ժողովի իշխող «Իմ քայլը» խմբակցությունը ստեղծել է ոչ ֆորմալ աշխատանքային խումբ՝ պատգամավորների էթիկայի կանոնների նախագիծ մշակելու եւ խորհրդարանական էթիկայի հանձնաժողով ստեղծելու հարցի շուրջ համաձայնության գալու համար (տե՛ս ստորեւ iv հանձնարարականը): Այդ մասին համաձայնություն է ձեռք բերվել «Բարգավաճ Հայաստան» եւ «Լուսավոր Հայաստան» ընդդիմադիր խմբակցությունների հետ:

16. 2020 թվականի փետրվարից հուլիս ընկած ժամանակահատվածում ոչ ֆորմալ աշխատանքային խումբը երեք խմբակցություններին է փոխանցել հետեւյալ փաստաթղթերը.

- պատգամավորների էթիկայի կանոնների նախագիծը, որը պատրաստվել է Եվրոպայի խորհրդի փորձագետների կողմից «Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի եւ դրա կանխարգելման ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում» ԵԽ/ԵՀ համատեղ ծրագրի շրջանակներում (2020 թվականի ապրիլ), եւ

- երկու զեկույց խորհրդարանում բարեվարքության եւ դրան առնչվող օրենսդրության ամրապնդման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման մասին, որոնք մշակվել են «Արա Ղազարյան» իրավաբանական ընկերության եւ Թրանսփարենսի ինթերնեշնլ Հայաստանի կողմից՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի «Նոր Հայաստան, ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում (2020 թվականի հուլիս):

Այդ փաստաթղթերը պատգամավորներն այլ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ քննարկել են 2020 թվականի փետրվարի 6-ից 7-ը եւ հուլիսի 28-ը կազմակերպված միջոցառումների ժամանակ: Պատգամավորների էթիկայի կանոնների նախագիծն այժմ խմբագրվում է ստացված մեկնաբանությունների հիման վրա:

17. Իշխանությունները հավելում են, որ «Հանրային ծառայության մասին» օրենքը, որը կիրառելի է, *ի թիվս այլնի*, պատգամավորների նկատմամբ, փոփոխվել է 2020 թվականի մարտի 25-ին եւ այժմ ներառում է նվերներ ընդունելու արգելքի եւ դրանց հաշվառման վերաբերյալ նոր դրույթներ (հոդվածներ 29 եւ 30):

18. Ինչ վերաբերում է հանձնարարականի ii մասին, իշխանություններն անդրադառնում են անկախ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին (ԿԿՀ), որը խորհրդակցություններ է կազմակերպում (էլեկտրոնային փոստով կամ

հեռախոսով) պատգամավորների հետ եւ շարունակաբար աջակցություն է ցուցաբերում անհամատեղելիության եւ գույքի հայտարարագրման հարցերով: 2020 թվականի առաջին կեսին մի խումբ պատգամավորների համար անցկացվել է «Հարց ու պատասխանի» առցանց նիստ: Հիմնականում պարզաբանումներ են տրվել դրսից ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրերի, ոչ առեւտրային կազմակերպություններում անդամակցության/պաշտոնների, ընկերության բաժնետեր լինելու պահանջներին համապատասխանելու, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու եւ այլնի վերաբերյալ:

19. ԳՐԵԿՈ-ն ի գիտություն է ընդունում պատգամավորների վարքագծի կանոնների նախագծի մշակումը, որի տեքստը չի ներկայացվել: ԳՐԵԿՈ-ն հասկանում է, որ 2021 թվականի հունիսի արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո այս նախագծի շուրջ քննարկումները կվերսկսվեն: «Հանրային ծառայության մասին» օրենքում ներառված՝ նվերների վերաբերյալ նոր նյութաիրավական դրույթները (որոնք հասանելի են ԳՐԵԿՈ-ին) նույնպես նշվում եւ մեկնաբանվում են ստորեւ ներկայացված xvi հանձնարարականի ներքո: Թեեւ ԿԿՀ-ն խորհրդատվություն է տրամադրում պատգամավորների անհամատեղելիության եւ գույքի հայտարարագրման վերաբերյալ, էթիկայի կանոններն ընդունելուց հետո պարբերաբար վերապատրաստումներ անցկացնելու կարիք կլինի:

20. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ ii հանձնարարականը մնում է մասամբ կատարված:

Հանձնարարական iii.

21. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ կանխելու առեւտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնող պատգամավորների նկատմամբ կիրառվող եւ նրանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ ձեռնարկատիրական*

գործունության շրջանակներում այլ վճարովի աշխատանք կատարելու սահմանափակումների շրջանցման հնարավորությունները:

22. Այս հանձնարարականը մասամբ է կատարված եղել Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցն ընդունելու դրությամբ: ԳՐԵԿՈ-ն ի գիտություն է ընդունել նորընտիր պատգամավորների համար կազմակերպված՝ բարեվարքության հարցերով մասնագիտական վերապատրաստման դասընթացները եւ ԿԿՀ-ի վարույթում գտնվող երկու ընթացիկ գործեր, որոնք վերաբերում են կողմնակի գործունեության արգելքի շրջանցման խնդրին:

23. Իշխանությունները նախ վկայակոչում են պատգամավորների անհամատեղելիության եւ շահերի բախման վերաբերյալ օրենսդրական շրջանակը: Նրանք նաեւ վկայակոչում են, որ ԿԿՀ-ն պատգամավորների անհամատեղելիության, շահերի բախման եւ նվերների հետ կապված հարցերի շուրջ որոշումներ ընդունող իրավասու մարմին է: 2020 թվականի հոկտեմբերի 26-ին ԿԿՀ-ն որոշում է ընդունել, որով այն գտնում է, որ պատգամավորներից մեկը խախտել է առեւտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու եւ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու սահմանափակումները: Այս որոշումը ներկայացվել է ԱԺ (եւ հասանելի է իր կայքում), իսկ ԱԺ խորհուրդը դիմել է Սահմանադրական դատարան՝ տվյալ պատգամավորի մանդատը դադարեցնելու հարցով[2]:

24. Միաժամանակ 2020 թվականի նոյեմբերից ԿԿՀ-ն ուսումնասիրում է, թե արդյոք բոլոր պետական պաշտոնյաները, այդ թվում՝ պատգամավորները, հետեւում են անհամատեղելիության պահանջներին: Պատգամավորներին, որոնք հայտարարագրել են ընկերության բաժնետոմսերի՝ որպես իրենց գույքի մասի

[2] Սահմանադրական դատարանը մերժել է գործի քննությունը, քանի որ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու ընթացակարգային պահանջները չեն պահպանվել ԱԺ-ի կողմից: Իշխանություններն այնուհետեւ նկատում են, որ նշված պատգամավորը կորցրել է իր մանդատը 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքում:

նկատմամբ սեփականության իրավունքը, դիմել են հավատարմագրային կառավարման համապատասխան պայմանագրերը ներկայացնելու խնդրանքով: Ընդհանուր առմամբ պատգամավորները ներկայացրել են այդպիսի 9 պայմանագիր, եւ ԿԿՀ-ի կողմից խախտումներ չեն հայտնաբերվել: Նմանապես մի քանի պնդումների առնչությամբ, որ պատգամավորները ներկայացուցչական կամ ղեկավար պաշտոններ են զբաղեցնում առեւտրային կազմակերպություններում, ԿՀԿ-ն պարզել է, որ տվյալ իրավաբանական անձինք լուծարվել են, եւ որ պետական ռեգիստրը չի թարմացվել: Վերոնշյալ եւ ոչ մի դեպքի մասով ԿԿՀ-ն վարույթ չի հարուցել:

25. Իշխանությունները հավելում են, որ ԿԿՀ-ն ներկայումս ավարտին է հասցնում գույքի հայտարարագրերի ուսումնասիրությունը, այդ թվում՝ պատգամավորների կողմից ներկայացված: Հատկապես ուշադրություն է դարձվում առեւտրային կազմակերպություններում բաժնետոմսերի սեփականությանը: Առ այսօր ստուգվել են 3 676 պետական պաշտոնյաների հայտարարագրեր եւ 275 դեպքերում, այդ թվում՝ 26 պատգամավորների մասով, հայտնաբերվել է հնարավոր խախտում: Այժմ քննվում են բոլոր այս դեպքերը:

26. ԿԿՀ-ի բոլոր վերլուծությունների արդյունքները (հաշվետվություններ եւ վիճակագրական տվյալներ) հասանելի են հանրության համար:

27. <u>ԳՐԵԿՈ</u>-ն վկայակոչում է, որ պատգամավորների կողմից կողմնակի գործունեության արգելքի հնարավոր շրջանցման դեպքերը քննարկելիս գնահատման զեկույցում նկարագրվում են կառուցվածքային բնույթի հավանական խնդիրները: Թեեւ պատգամավորների կողմնակի գործունեությունը վերահսկելու համար ԿԿՀ-ի կողմից առավել համակարգված ջանքեր են գործադրվում, այս աշխատանքի մեծ մասը թերեւս դեռ ընթացքի մեջ է: ԳՐԵԿՈ-ն հույս ունի պատշաճ ժամկետում տեղեկատվություն ստանալ վերոնշյալ 25-րդ պարբերությունում նշված ընթացակարգերի արդյունքի եւ վերահսկման պլանավորված նոր մեթոդաբանության կիրառման եւ ԿԿՀ-ի կողմից իրականացված ստուգումների նոր տեսակների մասին: ԳՐԵԿՈ-ն այնուհետեւ

նշում է, որ xviii հանձնարարականի ստորեւ ներկայացված գնահատումը պետք է այստեղ նույնպես հաշվի առնվի:

28. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ iii հանձնարարականը մնում է մասամբ կատարված:

Հանձնարարական iv.

29. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է պատգամավորների կողմից էթիկայի եւ վարքագծի նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողության համակարգն զգալիորեն ամրապնդել՝ ապահովելու՝ i) էթիկայի կանոնների եւ անհամատեղելիության դեպքերի ու լրացուցիչ գործունեության, շահերի բախման եւ նվերների ընդունման վերաբերյալ կանոնների անկախ, շարունակական եւ նախաձեռնողական վերահսկողությունը, ii) համապատասխան պատասխանատվության ենթարկելու միջոցով կանոնների կատարումը:*

30. Այս հանձնարարականը մասամբ է կատարված եղել Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցն ընդունելու դրությամբ: Հանձնարարականի i մասի առնչությամբ ԳՐԵԿՈ-ն եկել է այն եզրակացության, որ Ազգային ժողովի էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովը, որը պատասխանատու է էթիկայի կանոնների պահպանումը եւ պատգամավորների ժամանակավոր շահերի բախման դեպքերը վերահսկելու համար, բավականաչափ ակտիվ չի եղել շահերի բախման եւ անհամատեղելիության պահանջների խնդրի մասով: ԿԿՀ-ն, որը պետք է ստուգեր պատգամավորների գույքի հայտարարագրերը, վերլուծեր էթիկայի համապատասխան հանձնաժողովների (այդ թվում՝ խորհրդարանական հանձնաժողովի) եզրակացությունները եւ որոշում ընդուներ պատգամավորների անհամատեղելիության վերաբերյալ, դեռ նոր է ստեղծվել: Ձեռնարկված օրենսդրական միջոցները, օրինակ՝ ապօրինի հարստացման քրեականացումը եւ գույքի հայտարարագրերի մասով կանոնների խախտման համար սահմանված

վարչական տույժերը, համապատասխանել են հանձնարարականի ii մասի պահանջներին:

31. Այժմ իշխանությունները վերահաստատում են վերոնշյալ ii հանձնարարականի մասով նախկինում հաղորդած տեղեկությունները: Նրանք հղում են անում նաեւ ««Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին, որն Ազգային ժողովի կողմից քննարկվել է 2020 թվականի հուլիսից սկսած: Նախագծով նախատեսվում է Էթիկայի հանձնաժողովի ստեղծում, որը կազմված կլինի իշխող եւ ընդդիմադիր խմբակցություններից հավասար թվով անդամներից: Հանձնաժողովը կկազմավորվի յուրաքանչյուր հերթական խորհրդարանական նստաշրջանի առաջին հերթական նիստի ընթացքում (այն է՝ տարին երկու անգամ):

32. Իշխանությունները կրկին վկայակոչում են ԿԿՀ-ի կողմից Էթիկայի խորհրդարանական հանձնաժողովի եզրակացությունները՝ *ի թիվս այլնի* վերանայելու, պատգամավորների անհամատեղելիության վերաբերյալ որոշումներ ընդունելու եւ գույքի հայտարարագրերն ուսումնասիրելու իրավասությունները: 2021 թվականին ԿԿՀ-ն առաջնահերթություն է տվել պետական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից նվերներ եւ հյուրասիրություն ընդունելու գործելակերպի վերլուծությանը եւ նվերները հայտարարագրելու ընթացակարգ եւ դրան առնչվող ռիսկերի գնահատման մեթոդաբանություն կմշակի:

33. ԳՐԵԿՈ-ն ի գիտություն է ընդունում նախորդ Ազգային ժողովի կողմից մեկնարկած օրենսդրական գործընթացը, որը նպատակ ունի կազմավորել Էթիկայի ժամանակավոր հանձնաժողով, որը պատասխանատու կլինի Էթիկայի կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար: Առանց Ազգային ժողովի կանոնակարգում եւ պատգամավորների համար Էթիկայի կանոնների նախագծում առաջարկվող փոփոխությունների տեքստերը տեսնելու (տե՛ս ii հանձնարարականը)՝ ԳՐԵԿՈ-ն չի կարող պնդել, որ վերահսկման մեխանիզմը կհամապատասխանի հանձնարարականի

նախապայմաններին: ԳՐԵԿՈ-ն այնուհետեւ նշում է, որ 2021 թվականի հունիսի արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո Էթիկայի հանձնաժողով կազմավորելու վերաբերյալ քննարկումները կվերսկսվեն եւ կհանգեցնեն Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելուն: Ինչ վերաբերում է ԿԿՀ-ի վերահսկիչ դերին, անհամատեղելիության կանոններին պատգամավորների համապատասխանության ապահովմանն ուղղված աշխատանքները նշվում են iii հանձնարարականի ներքո, իսկ նվերներ ընդունելու հետ կապված կանոնների կիրառմանն առնչվող հարցերը՝ xvi հանձնարարականի ներքո: Սակայն չի ներկայացվել տեղեկատվություն պատգամավորների շահերի՝ բացառությամբ ժամանակավոր բնույթ ունեցող շահերի բախման նկատմամբ վերահսկողության վերաբերյալ:

34. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ iv հանձնարարականը մնում է մասամբ կատարված:

Կոռուպցիայի կանխարգելումը դատավորների շրջանում

Հանձնարարական vii.

35. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է բարեփոխել դատավորների պաշտոնների համալրման, առաջխաղացման եւ պաշտոնից ազատման ընթացակարգերը, այդ թվում՝ i) ամրապնդելով այդ ընթացակարգերում դատական իշխանության դերը եւ նվազեցնելով Հանրապետության նախագահի դերը եւ պահանջելով նրանից տալ իր որոշումների գրավոր հիմնավորումները, եւ ii) ապահովելով այդ ընթացակարգերի ժամանակ ընդունված ցանկացած որոշման դատական կարգով բողոքարկման հնարավորությունը:*

36. Պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցի ընդունման դրությամբ հանձնարարականի i մասը բավարար չափով կատարվել էր, իսկ հանձնարարականի ii մասը մասամբ էր կատարվել: Վերջինիս առնչությամբ ԳՐԵԿՈ-ն Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցում

ողջունել է այն փաստը, որ 2018 թվականին նոր Դատական օրենսգրքի ընդունմամբ Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) որոշումները՝ դատավորների որակավորումը ստուգելու կամ դատավորների առաջխաղացման ցուցակում ընդգրկելու միջնորդությունը մերժելու մասին, կարող են բողոքարկվել վարչական դատարան: Հանձնարարականի այս մասին ամբողջությամբ անդրադառնալու համար Դատական օրենսգրքում հետագա փոփոխությունների կատարումն ընթացքի մեջ էր:

37. Այժմ իշխանությունները շեշտը դնում են 2020 թվականի մարտին փոփոխված Դատական օրենսգրքի վրա: Խմբագրված դրույթներով նախատեսվում է, որ որակավորման գրավոր քննության փուլի արդյունքները կարող են բողոքարկվել հատուկ ստեղծված Բողոքարկման հանձնաժողով, իսկ այնուհետեւ՝ վարչական դատարան: Փոփոխությունները ԲԴԽ-ին թույլ են տալիս նաեւ վերանայել դատավորին պաշտոնից ազատելու վերաբերյալ իր իսկ որոշումները, եթե նոր հանգամանքներ են ի հայտ գալիս: Հաստատելու համար, որ բողոքարկման իրավունքն իրացվում է գործնականում, իշխանությունները ներկայացնում են ԲԴԽ եւ վարչական դատարաններ բողոք ներկայացնելու իրավունքը գործնականում կիրառելու վերաբերյալ 2018-2020 թվականների վիճակագրությունը, որում կարելի է տեսնել՝ ա) դատավորների որակավորման գրավոր եւ բանավոր քննությունների արդյունքների, եւ բ) հավակնորդներին դատավորների թեկնածուների ցուցակում չընդգրկելու մասին ԲԴԽ-ին առընթեր Դատական դեպարտամենտի որոշումների վերաբերյալ բողոքների թիվը:

38. Ինչ վերաբերում է հանձնարարականի չկատարված ii մասին, ԳՐԵԿՈ-ն նշում է, որ 2020 թվականին Դատական օրենսգրքի փոփոխությունների ընդունմամբ դատավորների որակավորման գրավոր քննությունների արդյունքներն այժմ կարող են բողոքարկվել ԲԴԽ եւ վարչական դատարաններ: Պարտավորությունների կատարման վերաբերյալ ընթացակարգի վաղ փուլերում հաղորդված տեղեկությունները հաշվի առնելով՝ ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ դատավորների պաշտոնում նշանակման եւ առաջխաղացման վերաբերյալ

որոշումների պատշաճ բողոքարկման մեխանիզմներ են ներդրվել, սակայն պաշտոնից ազատման դեպքում ամեն բան այլ է:

39. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ vii հանձնարարականը մնում է մասամբ կատարված:

Հանձնարարական viii.

40. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է՝ i) վերանայել դատավորների դեմ հարուցվող կարգապահական վարույթում Արդարադատության նախարարության դերակատարությունը, ii) ունենալ համապատասխան երաշխիքներ՝ ապահովելու համար, որ հարուցվող կարգապահական վարույթը չօգտագործվի որպես ազդեցություն գործադրելու կամ դատավորների նկատմամբ հաշվեհարդար իրականացնելու միջոց, այդ թվում՝ դատավորների համար կարգապահական որոշումները դատարան բողոքարկելու հնարավորություն:*

41. Այս հանձնարարականը մասամբ է կատարված եղել Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցն ընդունելու դրությամբ: Հանձնարարականի i մասը մնում է չկատարված, քանի որ Արդարադատության նախարարությանը դեռեւս վերապահված է դատավորների դեմ կարգապահական վարույթներ հարուցելու իրավունքը: Հանձնարարականի ii մասը մնում է մասամբ կատարված. ակնկալվում է դատավորների վերաբերյալ կարգապահական որոշումների ընդունելու համար բողոքարկման պատշաճ մեխանիզմների ներդրում:

42. Իշխանություններն այժմ հայտնում են, որ 2020 թվականի մարտի Դատական օրենսգրքի փոփոխություններով նախատեսվում է, որ Դատավորների ժողովին առընթեր էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմում, որը դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգեր սկսելու իրավասություն ունեցող մարմիններից մեկն է, պետք է ընդգրկվեն երկու ներկայացուցիչներ հասարակական

կազմակերպություններից[3]: Իշխանությունները վկայակոչում են այդպիսի ընթացակարգեր սկսելու հիմքերն ու պահանջները, այդ թվում՝ միջնորդության հիմնավորված լինելու պահանջը: Նրանք պնդում են, որ քանզի այս առնչությամբ որոշումները պետք է ընդունվեն ԲԴԽ-ի կողմից, որն անկախ մարմին է, նշանակություն չունի, թե ով է սկսել ընթացակարգը: Ավելին, հաշվի առնելով էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի ձեւավորման փոփոխությունները՝ ավելի շատ ժամանակ է պահանջվում դրա աշխատանքը եւ արդյունարարությունը գնահատելու համար նախքան պնդելը, որ այն կարող է կարգապահական ընթացակարգեր սկսելու համար պատասխանատու միակ մարմինը լինել: Իշխանություններն այնուհետեւ հայտնում են, որ ԲԴԽ-ն այն կարծիքին է, որ Արդարադատության նախարարը պետք է պահպանի կարգապահական հարցերում իր դերակատարությունը, եւ նրանք հղում են անում նոր մեխանիզմին, որը թույլ է տալիս ԲԴԽ-ին վերանայել դատավորներին պաշտոնից ազատելու վերաբերյալ իր իսկ որոշումները, եթե նոր հանգամանքներ են ի հայտ գալիս (տե՛ս վերեւում vii հանձնարարականը):

43. <u>ԳՐԵԿՈ</u>-ն ի գիտություն է ընդունում վերոնշյալ տեղեկատվությունը: Հանձնարարականի i մասի առնչությամբ այն վերահաստատում է իր դիրքորոշումը, որ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերում Արդարադատության նախարարն այլեւս չպետք է դերակատարություն ունենա, քանի որ դա անհամատեղելի է դատական իշխանության անկախության սկզբունքի հետ: Հաշվի առնելով, որ այս առնչությամբ նոր զարգացումներ չեն եղել, հանձնարարականի այս մասը մնում է չկատարված: Ինչ վերաբերում է հանձնարարականի ii մասին, էթիկայի եւ կարգապահական հարցերով հանձնաժողովի կազմում հասարակական կազմակերպություններից ներկայացուցիչների ընդգրկելը, ինչպես նաեւ նոր հանգամանքների ի հայտ գալու դեպքում ԲԴԽ-ի կողմից կարգապահական

[3] Ներկայումս դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգեր սկսելու լիազորություններ ունեն հետեւյալ մարմինները՝ Արդարադատության նախարարը, Դատավորների ժողովին առընթեր էթիկայի եւ կարգապահական հարցերով հանձնաժողովը եւ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ-ն):

վարույթը վերաբացելու հնարավորությունը դրական զարգացումներ են: Վերջինս, սակայն, չի կարելի որակել որպես բողոքարկման պատշաճ մեխանիզմ: ԳՐԵԿՈ-ն վերահաստատում է իր մտահոգությունը, որ դեռեւս հնարավոր չէ դատական կարգով բողոքարկել կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումը (այդ թվում՝ պաշտոնից ազատման, տե՛ս vii հանձնարարականը) եւ եզրակացնում է, որ հանձնարարականի այս մասը մնում է մասամբ կատարված:

44. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է որ viii հանձնարարականը մնում է մասամբ կատարված:

Հանձնարարական ix.

45. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է ներմուծել արդյունավետ կանոններ եւ մեխանիզմներ՝ արդարադատություն իրականացնելիս դատավորների գործունեությանն անհարկի միջամտության դեպքերը բացահայտելու եւ այդպիսի միջամտություն իրականացնող կամ իրականացնելու փորձ կատարող դատավորներին պատասխանատվության ենթարկելու համար:*

46. Այս հանձնարարականը մասամբ է կատարված եղել Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցն ընդունելու դրությամբ: ԳՐԵԿՈ-ն նշել է, որ 2018 թվականի Դատական օրենսգրքով արգելվում էր միջամտել դատարանի կամ դատավորի գործունեությանն արդարադատություն իրականացնման հետ կապված հարցերով եւ ներառում էր մանրամասն ընթացակարգեր՝ դատավորի կամ երրորդ կողմի կողմից անհարկի միջամտության դեպքերի մասին հաղորդելու եւ դրանց ընթացք տալու համար: Օրենսգրքով նաեւ կարգապահական տույժեր են նախատեսվում՝ պատժելու համար այն դատավորներին, որոնք միջամտում են մյուս դատավորների կողմից արդարադատության իրականացմանը, եւ նրանց, ովքեր իրենց գործունեությանն անհարկի միջամտության դեպքերի մասին չեն հաղորդում: Սակայն այս կանոնների գործնական կիրառության եւ ձեռնարկված կանխարգելիչ միջոցների վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել:

47. Իշխանություններն այժմ հղում են անում երկու դեպքի, երբ դատավորները դիմել են ԲԴԽ՝ հաղորդում ներկայացնելով իրենց գործունեությանը միջամտելու վերաբերյալ (առաջին դեպքում՝ մամլո հրապարակման միջոցով, իսկ երկրորդ դեպքում՝ քրեական գործի շրջանակներում դատավորին Հատուկ քննչական ծառայության քննիչի կողմից հարցաքննելու արդյունքում): ԲԴԽ-ն քննարկել է այս դեպքերը եւ միջնորդություններ է ներկայացրել համապատասխան մարմիններ, այն է՝ Գլխավոր դատախազություն՝ առաջին դեպքում, եւ Հատուկ քննչական ծառայության պետին՝ երկրորդ դեպքում: Երկու դեպքերն էլ ներկայումս ընթացքի մեջ են:

48. Իշխանությունները նաեւ հավելում են, որ 2020 թվականին 226 դատավորներ եւ դատավորի 5 թեկնածուներ հաճախել են «Դատական իշխանության անկախության եւ թափանցիկության» վերաբերյալ դասընթացին: Այս պարբերական դասընթացը նպատակ ունի բարելավելու դատական համակարգի անկախության ներքին եւ արտաքին կողմերի (իրավական հիմքեր, երաշխիքներ եւ այլն) վերաբերյալ գիտելիքները եւ կանխելու միջամտությունը դատարանի կամ դատավորի գործունեությանը՝ 2018 թվականի Դատական օրենսգրքին համապատասխան:

49. ԳՐԵԿՈ-ն ողջունում է արդարադատություն իրականացնելիս դատավորների գործունեությանն անհարկի միջամտության կանխման ուղղությամբ ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումները (իրազեկվածության բարձրացման եւ վերապատրաստումների տեսքով): Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է 2018 թվականի Դատական օրենսգրքով սահմանված կանոնների գործնական կիրառությանը, այն պնդում է, որ հանձնարարականին ամբողջությամբ համապատասխանելու համար առավել շոշափելի արդյունքներ պետք է գրանցվեն: Այն վկայակոչում է Գնահատման զեկույցի 158-րդ պարբերությունը, որը վերաբերում է ցածր ատյանի դատարանների դատավորների շրջանում տարածված այն գործելակերպին, երբ վերջիններս

խորհրդակցում են ավելի բարձր ատյանի դատարանների դատավորների հետ՝ վախենալով, որ վճիռները կբեկանվեն, եւ դատավորները կարգապահական պատասխանատվության կենթարկվեն «անօրինական որոշումներ» ընդունելու համար: Թվում է, թե բավականաչափ ուշադրություն չի դարձվել նմանատիպ դեպքերին, ոչ էլ դատավորներին, որոնք միջամտել են այլ դատավորների կողմից արդարադատության իրականացմանը, կամ նրանց նկատմամբ, ովքեր հաղորդում չեն ներկայացրել իրենց գործունեությանն անհարկի միջամտության վերաբերյալ, պատշաճ պատժամիջոցներ չեն կիրառվել, ինչպես հանձնարարականով է պահանջվում: Նկատի ունենալով վերոգրյալը՝ սույն հանձնարարականը մնում է մասամբ կատարված:

50. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ ix հանձնարարականը մնում է մասամբ կատարված:

Հանձնարարական xi.

51. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է իրականացնել նպատակաուղղված քաղաքականություն՝ դատավորների նկատմամբ անհարկի միջամտությունը, դատական իշխանությունում շահերի բախումը եւ կոռուպցիան կանխարգելելու ուղղությամբ, ինչը ներառում է՝ i) բոլոր դատավորների համար պարբերական բնույթ կրող պարտադիր վերապատրաստումների անցկացում՝ էթիկայի եւ վարքագծի, դատական անաչառության եւ անկախության, ինչպես նաեւ շահերի բախումը եւ կոռուպցիան կանխարգելելու վերաբերյալ, որոնք պետք է կազմակերպվեն դատական իշխանության սերտ մասնակցությամբ, եւ ii) դատական համակարգում գաղտնի խորհրդատվության տրամադրում՝ դատավորների իրազեկության մակարդակը բարձրացնելու եւ i մասում նշված ոլորտների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու համար:*

52. Այս հանձնարարականը մասամբ է կատարված եղել Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցն ընդունելու

դրությամբ: ԳՐԵԿՈ-ն գնահատել է 2019 թվականին դատական համակարգի մեծ թվով դատավորների թեկնածուների եւ դատավորների համար կազմակերպված հերթական վերապատրաստման ծրագրում մասնագիտացված դասընթացների ներառումը, որոնք շեշտը դնում են դատավորների վարքագծի կանոնների եւ կոռուպցիայի կանխարգելման վրա: Հետեւաբար հանձնարարականի i մասին բավարար չափով անդրադարձ է կատարվել: Հանձնարարականի ii մասը մնացել է չկատարված, քանի որ դատավորների համար գաղտնի խորհրդատվության վերաբերյալ ոչ մի էական տեղեկատվություն չի տրվել:

53. Իշխանություններն այժմ հաղորդում են, որ Դատական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերն անվավեր են ճանաչվել 2020 թվականի մարտին իրականացված օրենսդրական վերանայման արդյունքում: Նշված մասերն ունեին հետեւյալ բովանդակությունը՝ «Կարգապահական հարցերի հանձնաժողովը խորհրդատվական բնույթի մեկնաբանություններ է անում դատավորի վարքագծի կանոնների վերաբերյալ սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված անձանց գրավոր դիմումի հիման վրա»: Ներկայումս ընթացքի մեջ են խորհրդածություններ, որոնց արդյունքում օրենսդրական ճանապարհով թերեւս կստեղծվի մարմին, որը միաժամանակ կլինի չեզոք եւ իրավասու էթիկային առնչվող հարցերում դատավորներին գաղտնի խորհրդատվություն տրամադրելու համար:

54. Հանձնարարականի չկատարված ii մասի առնչությամբ ԳՐԵԿՈ-ն նշում է, որ էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովը՝ դատավորների կարգապահական հարցերով զբաղվող միակ մարմինը, դատավորների պահանջով դատավորի վարքագծի կանոնի խորհրդատվական բնույթի մեկնաբանություններ տալու լիազորություն այլեւս չունի: Այս զարգացումն անդրադառնում է ԳՐԵԿՈ-ի այն չափանիշի վրա, որ գերադասելի է՝ գաղտնի խորհրդատվություն տրամադրվի մի մարմնի կողմից, որը հեռու է բոլոր տեսակի կարգապահական մեխանիզմներից: Սպասելով հետագա բարեփոխումներին՝ մասնավորապես՝ չեզոք եւ իրավասու մարմնի ստեղծմանը, որը գաղտնի խորհրդատվություն կտրամադրի դատավորներին, ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ հանձնարարականի այս մասը մնում է չկատարված:

55. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ xi հանձնարարականը մնում է մասամբ կատարված:

Կոռուպցիայի կանխարգելումը դատախազների շրջանում

Հանձնարարական xv.

56. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է իրականացնել նպատակաուղղված քաղաքականություն՝ դատախազների նկատմամբ անհարկի միջամտությունը, ինչպես նաեւ դատախազական ծառայությունում շահերի բախումը եւ կոռուպցիան կանխարգելելու համար, ինչը ներառում է՝ i) բոլոր դատախազների համար պարբերական բնույթ կրող պարտադիր վերապատրաստումների անցկացում՝ էթիկայի եւ վարքագծի, անկողմնակալության ու անկախության, շահերի բախումը եւ կոռուպցիան կանխարգելելու վերաբերյալ, եւ ii) դատախազական ծառայությունում գաղտնի խորհրդատվության տրամադրում՝ i մասում նշված ոլորտների վերաբերյալ դատախազներին խորհրդատվություն տրամադրելու եւ նրանց իրազեկության մակարդակը բարձրացնելու նպատակով:*

57. Այս հանձնարարականը մասամբ է կատարված եղել Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցն ընդունելու դրությամբ: ԳՐԵԿՈ-ն ողջունել է էթիկայի եւ կոռուպցիայի կանխարգելման եւ այլ թեմաներով դատախազների համար 2019 թվականին անցկացված նոր պարտադիր վերապատրաստման դասընթացը, եւ որ նման վերապատրաստման դասընթացներ ակնկալվում են նաեւ 2020 թվականին: ԳՐԵԿՈ-ն նաեւ նշում է, որ դատախազների համար ստեղծվել է խորհրդատվության մեխանիզմ: Սակայն այն կարգապահական հարցերով մարմիններից առանձին չէ եւ նոր է սկսել գործել:

58. Հանձնարարականի i մասի առնչությամբ իշխանություններն այժմ հայտնում են, որ 2020 թվականին դատախազների թեկնածուների մասնագիտական վերապատրաստման ծրագրի շրջանակներում 45 անձ հաճախել է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց շրջանում կոռուպցիայի

դեմ պայքարի ներկայիս խնդիրները եւ դատախազի վարքագծի կանոնները» թեմայով դասընթացին: 2021 թվականի սկզբին նույն դասընթացին հաճախել է 72 դատախազ: Էթիկայի եւ վարքագծի, անկողմնակալության եւ անկախության, շահերի բախման եւ կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ դասընթացները 2020 թվականին ներառվել են Արդարադատության ակադեմիայի պարբերական, պարտադիր վերապատրաստման ծրագրում, սակայն չեն կազմակերպվել:

59. Ինչ վերաբերում է հանձնարարականի ii մասին, իշխանությունները հիմնականում վերահաստատում են նախկինում հաղորդված տեղեկատվությունը, մասնավորապես այն, որ դատախազներին էթիկայի հարցերով խորհրդատվություն տրամադրելու համար 2019 թվականի ապրիլին ստեղծվել է հատուկ հանձնաժողով: Սակայն այժմ այն նախագահում է Գլխավոր դատախազի տեղակալը, որը Գլխավոր դատախազին առընթեր Էթիկայի հանձնաժողովի անդամ չէ, մարմին, որը եզրակացություններ է ներկայացնում դատախազների թեկնածուների, նրանց առաջխաղացման եւ պատասխանատվության վերաբերյալ: Այնուհետեւ անդրադարձ է կատարվում հանձնաժողովի գործունեության նույն այն գործնական օրինակին, որը նշվել է Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցում[4]: Առ այսօր Հանձնաժողովն այլ դիմումներ չի ստացել:

60. ԳՐԵԿՈ-ն նշում է, որ էթիկայի եւ կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ վերապատրաստում է կազմակերպվել որոշ դատախազների եւ դատախազների թեկնածուների համար: Սակայն սա չի կարող հավասարեցվել բոլոր դատախազների համար հանձնարարականով նախատեսվող մասնագիտական, պարտադիր եւ պարբերական վերապատրաստումներին: Թեեւ դատախազների համար խորհրդատվության մեխանիզմը հանվել է կարգապահական հարցերով մարմնի գործառույթների շարքից, այս մեխանիզմի

[4] 2019 թվականի օգոստոսին հնարավոր կարգապահական զանցանքի առնչությամբ մի դեպքով ներկայացվել է խորհրդատվական պահանջ: Տվյալ դեպքում Հանձնաժողովը խորհրդակցել է Եվրոպայի դատախազների խորհրդակցական խորհրդի հետ եւ որոշել, որ կարգապահական կանոնների խախտում չի եղել:

գործնական կիրառության միակ հայտնի օրինակի մասին արդեն տեղեկացվել է պարտավորությունների կատարման ընթացակարգի նախորդ փուլում: ԳՐԵԿՈ-ն հասկանում է, որ հաշվետու ժամանակահատվածում այս մեխանիզմը «քնած» է մնացել, ինչն անհանգստության պատճառ է:

61. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ xv հանձնարարականը մնում է մասամբ կատարված:

Բոլոր կատեգորիաների անձանց առնչությամբ

Հանձնարարական xvi.

62. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է հետագայում մշակել պատգամավորների, դատավորների եւ դատախազների կողմից նվերներ ընդունելու նկատմամբ կիրառվող կանոններ, որպեսզի հնարավոր լինի տալ այնպիսի հստակ սահմանումներ, որոնք կընդգրկեն ցանկացած օգուտ, այդ թվում՝ բնաիրային օգուտներն ու փոխկապակցված անձանց տրամադրվող օգուտները, ներմուծել ստացված նվերների մասին վերահսկողություն իրականացնող համապատասխան մարմին հայտնելու պահանջ, իսկ դատավորներին առնչվող հատուկ դեպքում նվազեցնել գործող այն շեմերը, որոնց դեպքում պահանջվում է հայտնել նվերների մասին:*

63. Այս հանձնարարականը մասամբ է կատարված եղել Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցն ընդունելու դրությամբ: ԳՐԵԿՈ-ն ողջունել է «Հանրային ծառայության մասին» նոր օրենքում եւ նոր Դատական օրենսգրքում նվերներ ընդունելու վերաբերյալ համապարփակ դրույթներ ներառելու փաստը: Նոր իրավական շրջանակով, որպես կանոն, հիմնականում արգելվում էր նվեր ընդունելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նվերը թույլատրելի էր, եւ եթե սահմանված էին հաղորդման եւ գրանցման ընթացակարգեր: Մի շարք անորոշ եզրույթներ, սակայն, չեն հստակեցվել: Նվերի մասին հայտնելու համար դրա սահմանային արժեքները մնում են բավականին

բարձր: Ի վերջո, ԿԿՀ-ն միայն վերջերս է ստեղծվել եւ դեռեւս պետք է վերահսկողություն իրականացնի նվերներ ընդունելու սահմանափակմանը հետեւելու նկատմամբ:

64. Իշխանություններն այժմ հղում են անում «Հանրային ծառայության մասին» օրենքում եւ 2020 թվականի մարտի փոփոխություններով Դատական օրենսգրքում առկա կարգավորումներին նվերներ ընդունելու վերաբերյալ (որոնք ներկայացվել են ԳՐԵԿՈ-ին):

65. ԳՐԵԿՈ-ն նշում է, որ թեեւ «Հանրային ծառայության մասին» օրենքում եւ Դատական օրենսգրքում դեռեւս բազմաթիվ անորոշ ձեւակերպումներ կան թույլատրելի նվերների սահմանման մասով[5], դրանց մեծ մասի դեպքում իրավիճակը բարելավել է, քանի որ կա պահանջ հայտնելու այդպիսի նվերների մասին, եթե դրանք իրենց արժեքով գերազանցում են սահմանված շեմը (95 եվրո՝ պատգամավորների, դատավորների եւ դատախազների կողմից ստացված յուրաքանչյուր նվերի համար, եւ 385 եվրո՝ դատավորների կողմից նույն անձից, բացառությամբ մերձավոր ազգականի, օրացուցային տարում ստացված նվերների համար): ԳՐԵԿՈ-ն ուրախ է նաեւ, որ հայտնելու համար սահմանային արժեքներն զգալիորեն նվազել են: Սակայն որոշ նվերների եւ հյուրասիրության մասին հայտնելու կարիք չկա, ինչն անհանգստության պատճառ է[6]: Թույլատրելի նվերները հաշվառելու ընթացակարգը դեռեւս նախապատրաստական փուլում է (տե՛ս նաեւ iv հանձնարարականը վերեւում): Ի վերջո, ԿԿՀ-ի (պատգամավորների եւ դատախազների մասով) եւ էթիկայի եւ կարգապահական հարցերի

[5] Նվերը սահմանվում է որպես «ցանկացած գույքային առավելություն, որը ողջամտորեն չէր տրամադրվի հանրային պաշտոն չզբաղեցնող/դատավոր չհանդիսացող այլ անձի», իսկ բացառությունները, որոնք նվեր չեն հանդիսանում՝ «հրապարակային միջոցառումների ժամանակ սովորաբար տրվող նվերներ», «որպես կենցաղային հյուրընկալության մաս սովորաբար տրվող նվերներ»: Տե՛ս նաեւ Գնահատման զեկույցի 225-226-րդ պարբերությունները:

[6] Օրինակ՝ «սովորաբար կազմակերպվող հյուրընկալություն», «կրթաթոշակ, դրամաշնորհ կամ նպաստ, որը տրվել է հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով եւ նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի հետեւանքով» (պատգամավորների եւ դատախազների համար) եւ բարեկամներից ստացված նվերները, եթե նվերն էությամբ եւ չափով «ողջամտորեն համապատասխանում է միմյանց միջեւ հարաբերությունների բնույթին» (դատավորների համար):

հանձնաժողովի (դատավորների մասով) կողմից նվերների հետ կապված կանոնների մեկնաբանման եւ կիրարկման վերաբերյալ տեղեկատվությունը դեռ պետք է ներկայացվի:

66. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ xvi հանձնարարականը մնում է մասամբ կատարված:

Հանձնարարական xviii.

67. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապահովելու համար պատգամավորների, դատավորների եւ դատախազների նկատմամբ կիրառվող՝ գույքի հայտարարագրման վերաբերյալ կանոնների արդյունավետ հսկողությունը եւ կատարման ապահովումը՝ մասնավորապես ամրապնդելով Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործունեության անկախությունը, դրան վերապահելով ներկայացված հայտարարագրերը մանրակրկիտ ստուգելու, խախտումների դեպքերն ուսումնասիրելու, վարույթ հարուցելու եւ կանոնների խախտման դեպքում արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ պատասխանատվության միջոցներ կիրառելու հստակ մանդատ, լիազորություն եւ բավարար ռեսուրսներ:*

68. Այս հանձնարարականը մասամբ է կատարված եղել Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցն ընդունելու դրությամբ: ԳՐԵԿՈ-ն նշել է, որ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի՝ գույքի հայտարարագրերի վերահսկման գործառույթը փոխանցվել է ԿԿՀ-ին: ԿԿՀ-ի մասին օրենքում կատարված փոփոխություններն ընդունվել են, որոնցով մրցութային խորհուրդը հանվել ԿԿՀ անդամների նշանակման գործընթացից: ԿԿՀ-ի հինգ անդամների ընտրում էր խորհրդարանը՝ Կառավարության, խորհրդարանի իշխող կոալիցիայի եւ ընդդիմադիր խմբակցությունների եւ ԲԴԽ-ի կողմից ուղղակի առաջադրված թեկնածուների ցուցակի հիման վրա: Այսպիսի մոդելը ԳՐԵԿՈ-ի կարծիքով քաղաքականացման

զգալի ռիսկ է առաջացնում, ինչի դեմ պետք է պայքարել: Ինչ վերաբերում է գույքի հայտարարագրերի ստուգմանը, ԳՐԵԿՈ-ն ի գիտություն է ընդունում Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունը շահերի բախման հնարավոր տարբերակների մասին եւ ֆինանսական հայտարարագրման կանոնների խախտումներին ի պատասխան դրա կողմից հարուցված վարչական վարույթները: Հաշվի առնելով, որ համակարգն անցումային փուլում է, դրա արդյունավետությունը պետք է ավելի ուշ կրկին գնահատվի:

69. Իշխանություններն այժմ հայտնում են, որ ԿԿՀ-ի մասին օրենքը 2020 թվականի մարտին եւ 2021 թվականի հունվարին փոփոխվել է: Դրանով վերականգնվում է այն համակարգը, որի դեպքում ԿԿՀ անդամի թեկնածուները պետք է ընտրվեն համապատասխանաբար Կառավարության, Ազգային ժողովի, Բարձրագույն դատական խորհրդի, Մարդու իրավունքների պաշտպանի եւ Փաստաբանների պալատի կողմից նշանակված հինգ անդամից կազմված մրցութային խորհրդի կողմից:

70. Իշխանությունները տեղեկացնում են նաեւ, որ գույքի հայտարարագրման համակարգն զգալիորեն ձեւափոխվել է 2020 թվականի մարտից ի վեր, ինչն ամփոփ ներկայացվում է ստորեւ բերված աղյուսակում.

- շահերի հայտարարագրերը ներառվել են 2020 թվականի հունվարին, իսկ ծախսերի[7] հայտարարագրերը՝ 2021 թվականի հունվարին,
- հայտարարագրումը տարածվում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց հետ համատեղ ապրող նրանց ընտանիքի անդամների վրա,
- հայտարարագիր ներկայացնող անձանց ընդհանուր թիվը եռակի ավելացել է՝ հասնելով գրեթե 35 000-ի (պետական պաշտոն զբաղեցնող անձինք եւ նրանց ընտանիքի անդամներ),

[7] Գույքի հայտարարագրի մեջ պետք է նշվի յուրաքանչյուր նվերի մասին, եթե դրա արժեքը գերազանցում է 340 եվրոն:

- հայտարարագրման պահանջները տարածվում են պետական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից փաստացի կառավարվող գույքի, կանխիկ, անկանխիկ, կրիպտոարժույթով եւ այլ ֆինանսական միջոցների, ֆինանսական ակտիվների աղբյուրների վրա,

- ԿԿՀ-ին լրացուցիչ լիազորություններ են վերապահվել պահանջելու գույքի եւ եկամուտների իրավիճակային հայտարարագրեր երրորդ կողմերից եւ մերձավոր ազգականներից[8], որոնք գործարքի մեջ են մտել պետական պաշտոն զբաղեցնող անձանց հետ, ստանալ ֆինանսական, այդ թվում՝ բանկային տեղեկատվություն՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների բացահայտման միջոցով, պահանջել պետական պաշտոն զբաղեցնող անձի կողմից իրավիճակային հայտարարագիր, եթե պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո երկու տարվա ընթացքում նրա գույքի էական փոփոխության կասկած կա,

- 2020 թվականի հունվարին Կառավարության կողմից ընդունվել է գույքի հայտարարագրերի նոր ձեւաչափը,

- գույքի հայտարարագրերից հանրության համար հասանելի տվյալների շրջանակն ընդլայնվել է (Կառավարության 2020 թվականի մարտի 12-ի թիվ 306-Ն որոշում),

- ԿԿՀ-ն մշակել է հայտարարագրերը լրացնելու վերաբերյալ մանրամասն ցուցումներ, որոնք հանրության համար հասանելի են ՀՏՀ փաստաթղթերի եւ ուսուցողական տեսանյութերի հետ:

71. 2019 թվականի նոյեմբերից ի վեր ԿԿՀ-ն լայնածավալ գործունեություն է իրականացրել: Այն գույքի հայտարարագրերի վերլուծության համապարփակ մեթոդաբանություն եւ ներքին ընթացակարգ է մշակել եւ ներկայումս աշխատում է

[8] Սա Դատական օրենսգրքում եւ մի շարք այլ օրենքներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն առաջացրեց, որոնք կատարվեցին 2020 թվականի մարտի 25-ին:

ծախսերի հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանության վրա: Գույքի եւ եկամուտների, ինչպես նաեւ անհամատեղելիության պահանջների եւ շահերի բախման համար մշակվել են ռիսկի ցուցանիշներ, որպեսզի հնարավոր լինի ապահովել ռեսուրսների կենտրոնացումն ամենամեծ ռիսկերը պարունակող դեպքերի վրա: Իշխանություններն ընդգծում են, որ գույքի հայտարարագրերի վերլուծությունը ԿԿՀ-ի շարունակական գործունեությունն է, որը բաղկացած է չորս փուլերից՝ համապատասխանության ստուգում, ձեւական ստուգում, ճշմարտանմանության ստուգում եւ աուդիտորական ստուգում: Հայտարարագրերի վերլուծության գործիքն օգտագործվում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց եւ նրանց ազգականների գույքի եւ եկամուտների մասին ամբողջական վերլուծություն կատարելու համար: ԿԿՀ-ն հատկապես ջանքեր է գործադրում վստահ լինելու համար, որ իր վերլուծությունները հետեւողական են: Վերջերս մրցույթ է հայտարարվել գույքի հայտարարագրերի համար նոր թվային հարթակ մշակելու նպատակով: 2020 թվականի համար համապատասխան վիճակագրական տվյալները ներկայացված են ստորեւ.

- 2020 թվականին վերլուծության ենթարկված գույքի հայտարարագրերի ընդհանուր թիվը՝ 637, որից 400-ը դատավորների հայտարարագրեր են, 30-ը՝ պատգամավորների եւ 2-ը՝ դատախազների,

- իրականացված ստուգումների ընդհանուր թիվն ըստ հայտարարատուների տեսակների՝ պետական պաշտոն զբաղեցնող անձինք՝ 42 (այդ թվում՝ 10 պատգամավոր, 18 դատավոր եւ 2 դատախազ), ընտանիքի անդամներ՝ 105,

- հարուցված վարչական վարույթների թիվը՝ 61, որոնցից 59-ի դեպքում կիրառվել է վարչական բնույթի կանխարգելիչ միջոց (նախազգուշացում), իսկ 2-ի դեպքում վարչական տուգանք՝ 200 000 ՀՀ դրամի (317 եվրո) չափով,

- դատարանի կամ մեկ այլ վերջնական որոշում ընդունող մարմնի կողմից նշանակվող վարչական տուգանքների թիվը հետեւյալ

իրավախախտումների համար՝ հայտարարագիր չներկայացնելը՝ 59 (այդ թվում՝ 1 դատավորի նկատմամբ), կեղծ հայտարարագիր ներկայացնելը՝ 2 (այդ թվում՝ 1 պատգամավորի նկատմամբ),

- շահերի բախման խնդիրների վերաբերյալ տրամադրված անհատական խորհրդատվությունների թիվը՝ 35 (այդ թվում՝ 1 դատավորի նկատմամբ),

- շահերի բախմանն առնչվող հարցերի վերաբերյալ տրամադրված եզրակացությունների թիվը՝ 4 (այդ թվում՝ 1 պատգամավորի նկատմամբ), որոնցից մեկի դեպքում պահանջվում է, որ համապատասխան մարմինը հետագա պատժամիջոցներ կիրառի,

- անհամատեղելիության վերաբերյալ տրամադրված եզրակացությունների թիվը՝ 2, որոնցից մեկի դեպքում պահանջվում է, որ պատգամավորը վայր դնի մանդատը,

- վարքագծի վերաբերյալ տրամադրված եզրակացությունների թիվը՝ 1:

72. ԳՐԵԿՈ-ն ի գիտություն է ընդունում տրամադրված տեղեկությունները: Ինչ վերաբերում է համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքին, ԳՐԵԿՈ-ն հասկանում է, որ ԿԿՀ անդամների նշանակման գործընթացում մրցութային խորհրդի վերականգնումը կիրառելի է միայն համապատասխան ԿԿՀ կազմավորումների համար: Հանձնաժողովի հինգ անդամներից չորսն ընտրվել են նախկին կանոնների հիման վրա, որոնց առնչությամբ քննադատություններ են ներկայացվել Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցում: Հետեւաբար ԿԿՀ-ի գործունեության անկախության ամրապնդման համար դրական միջոցառումները դեռ արդյունք չեն տվել[9]:

[9] ԿԿՀ-ի անկախությանը սպառնացող վտանգները նկարագրված են, օրինակ, սույն հոդվածում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը պետք է առավել թափանցիկ գործի Ampop.am: ԳՐԵԿՈ-ն նշում է, որ հանձնաժողովի հինգերորդ անդամի հաստիքը, որը տարիներ շարունակ թափուր է մնացել, զբաղեցվել է 2021 թվականի սեպտեմբերին՝ նոր կանոններին համապատասխան:

73. Ինչ վերաբերում է գույքի հայտարարագրերի ստուգմանը, ԳՐԵԿՈ-ն նշում է, որ 2020 թվականի մարտից սկսած էական փոփոխություններ են կատարվել շահերի եւ գույքի հայտարարագրման համակարգում, որին զուգահեռ էականորեն ընդլայնվել է ԿԿՀ-ի գործառույթների շրջանակը: Սակայն հայտնի չէ՝ արդյոք ԿԿՀ-ի ռեսուրսները համամասնորեն ավելացել են: Բացի այդ, վերոնշյալ վիճակագրությունն առավել հուսադրող չէ, եթե համեմատենք ԿԿՀ-ին նախորդած Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի[10] վերաբերյալ ավելի վաղ հրապարակված վիճակագրության հետ, ուստի դժվար է պնդել, որ ներկայիս վերահսկողության եւ կիրարկման կարգն արդյունավետ է: Ամփոփելով կարելի է ասել, որ ընդհանուր առմամբ առ այսօր ձեռնարկված միջոցները ճիշտ ուղղությամբ են եղել, սակայն համակարգը մնում է հարաբերականորեն նոր, եւ ավելի շատ ժամանակ կպահանջվի, որպեսզի այն համոզիչ արդյունքներ տա:

74. <u>ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ xviii հանձնարարականը մնում է մասամբ կատարված:</u>

III. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

75. Նկատի ունենալով վերոնշյալը՝ ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ Հայաստանը որոշ սահմանափակ քայլեր ձեռնարկել է Գնահատման չորրորդ փուլի չկատարված հանձնարարականներին համապատասխանելու համար: Գնահատման չորրորդ փուլի զեկույցում ամփոփված տասնութ հանձնարարականներից յոթը մնում են բավարար չափով կատարված:

76. Ավելի կոնկրետ՝ v, vi, x, xii, xiii, xiv եւ xvii հանձնարարականներին բավարար չափով անդրադարձ է կատարվել, իսկ i-iv, vii-ix, xi, xv, xvi եւ xviii հանձնարարականները մասամբ են կատարվել:

[10] Տե՛ս Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցի 82-րդ պարբերությունը:

77. Պատգամավորների մասով օրենսդրական գործընթացի թափանցիկությանը դեռեւս պետք է առաջնահերթություն տալ՝ շեշտը դնելով օրինաստեղծ գործընթացում հանրային ներգրավվածության եւ «արագացված ընթացակարգերի» օգտագործման վրա: Մշակվել է պատգամավորների համար էթիկայի կանոնագրքի նախագիծ եւ Ազգային ժողովի կանոնակարգի փոփոխությունների նախագիծ՝ նպատակ ունենալով ստեղծել պատգամավորների կողմից էթիկայի կանոններին հետեւելու վերահսկողության մեխանիզմ, սակայն դեռեւս չի ներկայացվել ԳՐԵԿՈ-ին քննարկման համար: Պատգամավորների կողմնակի գործունեության նկատմամբ վերահսկողությունն առավել պարբերական բնույթ ունի, սակայն շոշափելի արդյունքների դեռեւս չի հանգեցրել:

78. Ինչ վերաբերում է դատական մարմիններին, Արդարադատության նախարարը դեռեւս դերակատարություն ունի դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերում, ներկայիս իրավիճակն անհամատեղելի է դատական իշխանության անկախության սկզբունքի հետ: Բողոքարկման պատշաճ մեխանիզմներ են նախատեսվում դատավորների նշանակման եւ առաջխաղացման, սակայն ոչ պաշտոնից ազատման մասին որոշումների համար: Թեեւ դատախազների համար ներքին խորհրդատվության մեխանիզմը հանվել է կարգապահական հարցերով մարմինների գործառույթների շարքից, գործնականում դրա կիրառության կամ անհամատեղելիության պահանջների եւ այլ սահմանափակումների վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից (ԿԿՀ) դատախազներին խորհրդատվություն տրամադրելու վերաբերյալ ապացույց չկա: Դեռեւս պետք է կազմակերպվեն էթիկայի եւ այլ հարցերով մասնագիտական, պարտադիր եւ պարբերական վերապատրաստումներ բոլոր գործող դատախազների համար:

79. Ի վերջո, ինչ վերաբերում է պատգամավորներին, դատավորներին եւ դատախազներին, նշվում է նվերներ ընդունելու մասին համապարփակ դրույթների վերաբերյալ, սակայն չի հաստատվել՝ արդյոք գործում է թույլատրելի նվերների հաշվառման ընթացակարգը: Բացի այդ, դեռեւս պետք է

համապատասխան միջոցներ ձեռնարկվեն ԿԿՀ-ի կողմից գույքի հայտարարագրերի, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների եւ նվերներ ընդունելու վերաբերյալ կանոնների արդյունավետ վերահսկողությունը եւ դրանց կատարումն ապահովելու համար: ԿԿՀ-ի գործունեության անկախությունն ամրապնդելու համար ձեռնարկված միջոցները դեռեւս պետք է արդյունք տան, եւ դրա ռեսուրսները պետք է համաչափ լինեն դրա էապես ավելացված իրավասություններին եւ լիազորություններին:

80. Հաշվի առնելով վերը նշվածը՝ ԳՐԵԿՈ-ն նշում է, որ հանձնարարականների կատարման ներկայիս ցածր մակարդակը Կանոնակարգի խմբագրված 31-րդ հոդվածի 8.3 կետի իմաստով «ընդհանուր առմամբ անբավարար է»: Կանոնակարգի 32-րդ հոդվածի 2-րդ կետի i ենթակետի համաձայն՝ ԳՐԵԿՈ-ն չկատարված հանձնարարականները (մասնավորապես՝ i-iv, vii-ix, xi, xv, xvi եւ xviii հանձնարարականները) հնարավորինս շուտ, սակայն ամենաուշը մինչեւ 2022 թվականի սեպտեմբերի 30-ը կատարելու համար ձեռնարկված միջոցների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու խնդրանքով դիմում է հայկական պատվիրակության ղեկավարին:

81. Ավելին, 32-րդ հոդվածի 2-րդ մասի ii կետի «ա» ենթակետին համապատասխան՝ ԳՐԵԿՈ-ն իր նախագահին առաջարկում է նամակ ուղարկել Հայաստանի պատվիրակության ղեկավարին՝ պատճենն ուղարկելով Արարողակարգային հարցերով կոմիտեի նախագահին՝ նրա ուշադրությունը հրավիրելով համապատասխան հանձնարարականների կատարված չլինելու եւ այն փաստի վրա, որ հնարավորինս շուտ զգալի առաջընթաց գրանցելու համար անհրաժեշտ է վճռական գործողություններ ձեռնարկել:

82. Ի վերջո, ԳՐԵԿՈ-ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին հնարավորինս շուտ թույլ տալ հաշվետվության հրապարակումը, հաշվետվությունը թարգմանել պետական լեզվով եւ այդ թարգմանությունը հանրամատչելի դարձնել: